ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/67

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.03.2020թ. թիվ 26/26-1/4763-2020 գրությամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 26.03.2020թ. թիվ 97.1-20 գրության հիման, վրա 30.03.2020թ. թիվ 26/26-1/4763-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Բլոքչեյնհոսթ» ՍՊ ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/67 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերության կողմից էլեկտրոնային փոստի միջոցով 06.04.2020թ. ներկայացվել է միջնորդություն «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով հրավիրված նիստը հետաձգելու վերաբերյալ, որով խնդրել է վերոհիշյալ հարցին անդրադառնալ երկրում ստեղծված իրավիճակը հաղթահարելուց հետո: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 06.04.2020թ. կայացած նիստի ընթացքում որոշում է կայացվել միջնորդությունը մերժել և միևնույն ժամանակ Ընկերությանը կրկին դիրքորոշում ներկայացնելու հնարավորություն է ընձեռնվել, որի նպատակով որոշում է կայացվել նիստը հետաձգել և Ընկերությանը տրամադրել 3 աշխատանքային օր՝ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

Ընթացակարգի քննության արդյունքներով հրավիրված որոշման հրապարակման նիստը նշանակվել է 13.04.2020թ. ժամը 10:20-ին:

Մինչդեռ, Ընկերության կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է դիրքորոշում 13.04.2020թ. ժամը 09:55-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 19-րդ կետը՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված դիրքորոշումը ուսումնասիրության առարկա չի դարձել:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.03.2020թ. թիվ 97.1-20 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131» ծածկագրով էլեկտրական սարքերի գնման ընթացակարգով «Բլոքչեյնհոսթ» ՍՊ ընկերությունը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ճանաչվել է ընտրված մասնակից:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 50-րդ կետով՝ ընտրված մասնակցի՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի հետ 06.11.2019թ. կնքվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» ծածկագրով պայմանագիրն (հետայսու նաև՝ Պայմանագիր) այն մասին, որ Ընկերությունը 30 օրացուցային օրվա ընթացքում պետք է Պատվիրատուին մատակարարի անջատիչներ և կառավարող սարք (հետայսու նաև՝ ապրանք):

Ընկերությունը 06.12.2019թ. Պատվիրատուին ներկայացրել է գրություն՝ ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: Ընկերության պահանջը հակասում է Պայմանագրի 8.8 կետին, որով նախատեսվում է, որ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ուշ, քան մատակարարման ժամկետը լրանալուց 5 օրացուցային օր առաջ:

Պատվիրատուն 17.12.2019թ. Ընկերությանն ուղարկված գրությամբ առաջարկել է, որպեսզի վերջինս նշի ապրանքի մատակարարման նոր ժամկետ:

Սակայն, ի պատասխան նշված գրության, Ընկերությունը 01.02.2020թ. հայտնել է, որ ցանկանում է Պայմանագիրը երկարացնել 90 օր ժամկետով, ինչը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին:

Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետի ավարտից հետո Պատվիրատուն բազմիցս նախազգուշացրել է Ընկերությանը պայմանագրային պարտավորությունների չկատարման վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/67 ընթացակարգի շրջանակներում 06.04.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության և «Բլոքչեյնհոսթ» ՍՊ ընկերության միջև 06.11.2019թ. կնքվել է թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» ծածկագրով

ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 04.03.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2020թ. թիվ 26/26-1/4763-2020 գրությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության 26.03.2020թ. թիվ 97.1-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության և «Բլոքչեյնհոսթ» ՍՊ ընկերության միջև 06.11.2019թ. կնքվել է թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 6 281 000 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1 հատ «Անջատիչ ABB՝ 1TGE106012M4250», 2 հատ «Անջատիչ ABB՝ 1TGE106010A4025» և 3 հատ «Կառավարող սարք ABB՝ 1TGE120010R1000» ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր:

«Բլոքչեյնհոսթ» ՍՊ ընկերությունը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերությանն ուղղված 05.12.2019թ. գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի

շրջանակներում մատակարարվող «անջատիչ սարքեր» ապրանքատեսակի մատակարարումը Պայմանագրով սահմանված ժամկետում դարձել է անհնարին՝ ապրանքի արտադրության ուշացման պատճառով: Միևնույն ժամանակ հայտնել է, որ վերոնշյալ ապրանքի մատակարարումը կիրականացվի 30 օրվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել է համապատասխան ստորաբաժանմանը տալ հանձնարարական՝ ապրանքների մատակարարման ժամկետը 30 օր տևողությամբ երկարաձգելու նպատակով լրացուցիչ համաձայնագիր կազմելու վերաբերյալ:

Պատվիրատուն 17.12.2019թ. Ընկերությանն ուղարկված գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի ժամկետի երկարաձգման վերաբերյալ ներկայացրած առաջարկն ընդունելի չէ, միաժամանակ առաջարկել է, որպեսզի Ընկերությունը ներկայացնի ապրանքի մատակարարման հնարավոր վերջնաժամկետ:

Ի պատասխան Պատվիրատուի գրության՝ Ընկերությունը 01.02.2020թ. գրությամբ ներկայացրել է ապրանքների չմատակարարման պատճառները և առաջարկել է երկկողմանի համաձայնագրով լուծել Պայմանագիրը՝ հաշվի առնելով ֆորս մաժորային իրավիճակը կամ Պայմանագիրը երկարաձգել 90 օրացույցային օրով՝ նոր գործընկեր արտադրողից ապրանքները պատվիրելու համար:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն Ընկերությանն ուղղված 20.02.2020թ. թիվ 77/20 գրությամբ ծանուցել է՝ հայտնելով, որ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսված մատակարարումը Ընկերությունը պետք է կատարեր համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի և ժամանակացույցի, այն է՝ 03.12.2019թ.:

Սակայն, սույն ծանուցման օրվա դրությամբ Ընկերությունը չի կատարել իր ստանձնած պարտականությունը և չի մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրում նշված ապրանքները:

Ըստ Պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը, ընդ որում՝ պայմանագիրը էականորեն խախտված է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավելի:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 04.03.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊ ընկերությունն իր և Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության միջև 06.11.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում, այն է՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերությանը 1 հատ «Անջատիչ ABB՝ 1TGE106012M4250», 2 հատ «Անջատիչ ABB՝ 1TGE106010A4025» և 3 հատ «Կառավարող սարք ABB՝ 1TGE120010R1000» ապրանքները մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ Ընկերությունն Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ ընդհանրապես չի մատակարարել Պայմանագրով նախատեսված Ապրանքը, և Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.03.2020թ. թիվ 26/26-1/4763-2020 գրությամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**